

ՅԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵՇ ՏՕՆԸ

ԱԶԴԱՑԻՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՄԵԾ
ԿՈՉԸ

Հայկական պրի ու գրականութեան
մեծ տօնը հայութիւնը յաւերժացնում
է երկու ֆօնդով—զպրոցական և գրա-
կան:

Դոլրոցական ֆօնդի հիմքը իր անձ-
նական մի քանի հազար բուրլով զրել
է հանգ. իզմիրլեան կաթուղիկոսը,
իսկ գրական ֆօնդի խնդիրը մի քան
տարի առաջ առաջադրեց Թիֆլովի ին-
տելիցիացիան ու մի քանի անդամ
փորձ արաւ իրազործելու, բայց ան-
կարելի եղաւ մինչև անցեալ տարի:

Անցեալ տարի երկուան էլ, մինը
էջմիածնի, միւսը Թիֆլիսի յօրեիհանա-
կան յանձնաժողովի նախաձեռնու-
թիամբ հաստատեցին ու կեանք ա-
ռան:

Մեր ազգային-կուլտուրական յա-
ռաջադիմութեան համար երկուսի կա-
րուրութիւնն ու մեծութիւնն էլ էսօր
դժար թէ կարողանանք չափել ու ո-
րոշել:

Երեակայեցէք թէ հայ ազգը ճշմա-
րիտ որ բոլնի էզ լուսաւոր գործե-
րի սիրով և Կոմիլասից մինչև Եղիպ-
տոս ու Ամերիկա, Եւրոպայից մինչև
Պարսկաստան ու Հնդկաստան ամեն
մի զիտակից հայ վեր կենայ էլ օրը
իր զգացմունքն ու լուման մէջ բե-
րելու դնելու իր ազգի վերածնութեան
մեծ գործի վրայ:

Անխորտակելի ու անսասան կապա-
հովեի մեր ազգային ինքնուրոյնու-
թիւնը աշխարհքում ու ազգերի շար-
քում:

Ուսենալ հարուստ, ապահով զպրոց-
ներ և ուժեղ զրականութիւն—կը նշա-
նակի ամուր ու պատւաւոր կանգնել
լուսաւոր ազգերի շարքում: Եւ գոնէ
ես խորապէս հաւատում եմ հայի էդ
կուլտուրական ուժին. մենք կարող
ենք էպակս լինել և պէտք է լինենք:
Դրա հետ միասին էս տօնն էլ էնքան
մեծ առիթ է ու ներկայ հանգամանք-
ներն էլ էնքան նպաստաւոր, որ յա-
ջնողութեան կասկածելու ոչ մի պատ-
ճառ չկայ:

Զէ՞ որ մենք գանգատւել ենք, թէ
մեզ հնարաւորութիւն չեն տալիս.
ահա և պատշաճ օրը և ամին իրա-
ւումք ու ազատութիւն:

Վեհափառ Կաթողիկոսի հսկողու-
թեան ու հովանաւորութեան տակ են
հայոց զպրոցները, զպրոցական ֆօնդի
իրաւունքն էլ տած է նրան և գտըն-
ուում է նրա հսկողութեան տակ, իսկ
զրականութիւնը, որ ոչ ոքի հովանա-
ւորութեան տակ չի և չի էլ կարող
լինել, ունի իր ազատ ու անկախ ըն-
կերութիւնը օրինաւոր կանոնադրու-
թիւնով և իր առանձին ֆօնդը. Գու-
մար յատկացնողները առաջուց պէտք
է որոշեն ու նշանակեն, թէ ինչքան են
յատկացնում որին—զպրոցին և գրա-
կանութեանը—երկուսը միասին մեր
ազգային վերածնութեանը:

Խորայէլի մարգարէն երբեմն մար-
գարէանում էր իր ժողովրդի ցրւած
ու ցամաքած ոսկըների վրայ, կենդա-
նութեան շունչ էր կանչում նրանց
վրայ, և չոր ոսկորները մարմին ու
շունչ էրն առնում ու նորից երկրում
կանգնում էր նորոգւած Խորայէլի ժո-
ղովուրդը:

Մեր ժողովրդից էլ երկար դարերի
տառապանքից ու անջանքից յետոյ
թէն զրեթէ ոսկորն է մնացել ցրւած
աշխարհքի երեսովը մին, բայց մեր
ոսկորն էլ էն ոսկորիցն է, որ ընդունակ
է կեանք ու շունչ առնելու ու վերկե-
նալու մարգարէական ձայնի վրայ: Եւ
ահա մեզ էլ էսօր կանչում է մեզ զիը
ու զրականութիւն տուղների Սահակ-
Մեսրոպի ու նրանց հոգեշունչ յետ-
նորդների, մեր բազմաթիւ հոյակապ
Ուսուցիչների ու Դրոզների միտհա-
մուռ մարգարէական ձայնը Եղիկիէլի
ձայնի նման, — և եւ տաց զոգի իմ ի
ձեզ, և լինիջիք կենդանի, և եղից
զձեզ յերկրի ձերում»...

Եւ ամեն մի հայ պիտի լսի էս
մարգարէական ձայնը հայոց զրի ու
զրականութեան մեծ տօնի օրը ու
պիտի թնդայ էս ձայնից:

Յովհ. Թումանեան